ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի չորրորդ գումարման տասնմեկերորդ
նստաշրջանի արդյունքների մասին
(06.02.2012թ.-24.05.2012թ.)

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի չորրորդ գումարման տասնմեկերորդ նստաշրջանի ընթացքում գումարվել է 3 քառօրյա նիստ, իսկ 3-ը տեղի չի ունեցել՝ քվորումի բացակայության պատճառով:

Նստաշրջանի սկզբում հաստատված օրակարգում ընդգրկված էր 137 հարց, որից 66-ը ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնություններն էին, 59-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորներինը, 4-ը՝ ՀՀ կառավարության և ՀՀ ԱԺ պատգամավորների համատեղ նախաձեռնություններն էին, 8-ը՝ պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող հարցեր:

Հետագայում նստաշրջանի օրակարգը լրացվեց ևս 20 հարցով, որից 14-ը ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնություններն էին (5-ը ՀՀ կառավարության որոշմամբ համարվել էին անհետաձգելի), 5-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորներինը (1-ը՝ ՀՀ ԱԺ որոշման նախագիծ), իսկ 1-ը՝ ՀՀ նախագահի առարկությամբ Ազգային ժողով վերադարձված <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին>>

Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> և <<Պետական տուրքի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը:

Նստաշրջանի օրակարգում ընդգրկված 157 հարցերից 147-ը օրենքների նախագծեր կամ նախագծերի փաթեթներ էին, որոնցից գարնանային նստաշրջանի ընթացքում քննարկվել և ամբողջությամբ ընդունվել են 47-ը (40-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններն էին՝ 6-ը՝ անհետաձգելի, 7-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորներինը):

Ամբողջությամբ ընդունված 47 օրենսդրական նախաձեռնություններից 6-ը «մայր» օրենքներ էին (5-ը ՀՀ կառավարության նախաձեռնությունները, իսկ 1-ը՝ ԱԺ պատգամավորներինը), իսկ 41-ը՝ գործող օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին:

Նստաշրջանի ընթացքում Ազգային ժողովը՝

Քննարկեց.

- Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2012 թվականի գործունեության ծրագիրը,

-Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2012 թվականի տարեկան գործունեության ծրագիրը:

Ընտրեց.

-Ժամանակավոր հաշվիչ հանձնաժողով:

Նստաշրջանի ընթացքում ՀՀ Ազգային ժողովը քննարկեց և ընդունեց ՀՀ նախագահի առարկությունները <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>>, <<Պետական տուրքի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>> ՀՀ օրենքների վերաբերյալ:

Նստաշրջանի ընթացքում վավերացվեցին 19 միջազգային պայմանագրեր, որոնցից 7-ը ֆինանսատնտեսական,

3-ը՝տրանսպորտի, 1-ը՝ իրավական օգնության, 1-ը մաքսային բնագավառներում համագործակցության մասին էին եւ այլն:

ՀՀ Ազգային ժողովը քվեարկությամբ մերժեց.

ա) <<Օսմանյան կայսրությունում պոնտոսահույների, ասորիների և այլ ազգերի ցեղասպանության դատապարտման մասին>> և <<Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթն օրակարգ ընդգրկելու մասին հարցը:

բ) <<Կանխիկ գործառնությունների սահմանափակման մասին>>, <<Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին>>, <<Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին>>, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթն առաջին ընթերցմամբ ընդունելու մասին հարցը:

գ) <<Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին>>, <<Ազգային ժողովի կանոնակարգ>> Հայաստանի Հանրապետության օրենքում

փոփոխություն կատարելու մասին>>, <<Սահմանադրական դատարանի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթն առաջին ընթերցմամբ ընդունելու մասին հարցը, ինչը հեղինակների որոշմամբ համարվել էր արտահերթ:

դ) <<Դատական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>>, <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթն առաջին ընթերցմամբ ընդունելու մասին հարցը:

Նստաշրջանի ընթացքում 6 պատգամավոր գրավոր և 23 պատգամավոր բանավոր հարցերով դիմել են ՀՀ կառավարությանը: 43 պատգամավոր հանդես են եկել հայտարարությամբ, որից 10-ը վերաբերում էր գործադիրի գործունեությանը: